ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 17.08.2016թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 80/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Խաչպար» ՍՊԸ-ի 29.07.2016թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-80/16 բողոք) և կից փաստաթղթերը, «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի 04.08.2016թ. թիվ 08-247 և 11.08.2016թ. թիվ 08-253 գրությունները, «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, Ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր) և ԳԲԽ-80/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 15.08.2016թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. <u>«Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>

«Խաչպար» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 29.07.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների և նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընկերությունը ներկայացված բողոքով տեղեկացրել է, որ «Խաչպար» ՍՊԸ-ն մասնակցել է վերոհիշյալ Ընթացակարգին:

Ընկերությունը բողոքով հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 27.07.2016թ. թիվ 11 արձանագրության 1-ին կետով մերժել է «Խաչպար» ՍՊԸ-ի հայտով

ներկայացված թիվ 2-րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ, և 53-րդ չափաբաժինները՝ ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը հրավերով նախատեսվածին չհամապատասխանելու և ոչ համարժեք ապրանք առաջարկելու հիմնավորմամբ:

Ընկերությունը նշել է, որ 2016թ. մայիսի 27-ին «Խաչպար» ՍՊԸ-ի տնօրենը ահազանգել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գիծ և հայտնել է, որ Ընթացակարգի հրավերի 2-րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ, և 53-րդ չափաբաժիններում Պատվիրատուի կողմից կազմված գնման առարկաների տեխնիկական և որակական բնութագրերում նշված են գնման առարկաների անվանումները ունեցող կոնկրե՛տ արտադրողի՝ տվյալ բրենդային անվանում ունեցող նյութերի կոնկրե՛տ տվյալները, ինչով բացառում են մեկից ավելի մասնակիցների մասնակցության հնարավորությունը տվյալ չափաբաժիններին՝ առաջացնելով չհիմնավորված խոչընդոտներ մասնակիցների հավասար մրցակցության համար:

Ընկերությունը տեղեկացրել է, որ Պատվիրատուն «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով հրավերի 2-րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ, և 53-րդ չափաբաժինների գնման առարկաների տեխնիկական բնութագրերը գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումներով կազմելով՝ դրանով իսկ իր համար հիմքեր է ստեղծում հայտերի գնահատման ժամանակ, բացի մեկ մասնակցից, մյուս բոլոր հնարավոր մասնակիցների ներկայացրած հայտերը մերժելու՝ տեխնիկական բնութագրերին չհամապատասխանելու հիմքով:

«Խաչպար» ՍՊԸ-ն տեղեկացրել է նաև, որ 2016թ. մայիսի 30-ին «Խաչպար» ՍՊԸ-ի տնօրենը դիմում է ներկայացրել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ մատնանշելով թույլ տրված օրենքի խախտումները, և խնդրելով 2-րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ, և 53-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում անհրաժեշտ փոփոխություններ կատարել և այդ մասին սահմանված կարգով հայտարարություն հրապարակել, որից հետո 2016թ. մայիսի 31-ին «Խաչպար» ՍՊԸ-ն ստանում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.05.2016թ. թիվ 2 արձանագրությունը, որտեղ նշված է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գտնում է, որ Ընկերության կողմից 2016թ. մայիսի 30-ի դիմումով ներկայացված պահանջը հիմնավոր չէ և հրավերի փոփոխության անհրաժեշտություն առկա չէ:

Ընկերությունը, բողոքում մեջբերել է ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 24-րդ կետի, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12 հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-րդ, Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջները:

Ընկերությունը, մեջբերելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդված 1-ին մասով սահմանված պահանջը, բողոքարկման խորհրդին խնդրել է.

1. կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել կողմերի միջև պայմանագրի կնքման գործընթացը թիվ 2-րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ, և 53-րդ չափաբաժինների մասով,

2. դադարեցնել գնահատող հանձնաժողովի 27.07.2016թ. թիվ 11 արձանագրության 1-ին կետով՝ թիվ 2-րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ, և 53-րդ չափաբաժինների մասով «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշում:

«Խաչպար» ՍՊԸ-ն, ի լրումն բողոքի, 09.08.2016թ. գրությամբ տեղեկացրել է, որ հրավերի թիվ 2, 50, 51, 52 և 53-րդ չափաբաժիններով Պատվիրատուի կողմից գրված բրենդային անվանումներ ունեցող ախտահանող միջոցների և նրանց որպես համարժեք՝ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացվածների կիրառման նպատակների, ոլորտների և ախտահանման ենթակա օբյեկտների միջև՝ համաձայն այդ միջոցների կիրառման հրահանգների, չկա ոչ մի տարբերություն; որ դրանք բոլորը համընկնում են, նույնն են, այսինքն՝ համարժեք են, օրինակ՝

□2-րդ չափաբաժին - համաձայն ՀՀ ԱՆ հաստատված «Պրեսեպտ» ախտահանող նյութի մեթոդական հրահանգի 1 հատ 5,0 գ կշռով հաբը ջրում լուծելիս անջատվում է 1.44 - 1.76 գ ակտիվ քլոր: Պատվիրատուն իր հրավերի տեխնիկական բնութագրում գրել է անջատվող քլորի միայն վերին սահմանը՝ 1.76 գ, իսկ ստորին սահմանը չի գրել, ինչպես նաև չի նշել, թե 1 հատ 5,0 գ կշիռ ունեցող «Պրեսեպտ» հաբը 10 լ ջրում լուծելիս՝ ինչ կոնցենտրացիայի աշխատանքային լուծույթ է առաջացնում, դրանով իսկ խախտելով ՀՀ «Գնումների մասի» օրենքի թիվ 12 հոդվածի 1-ին կետի և 2-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները՝ գնման առարկայի բնութագրերը ամբողջությամբ չեն նկարագրել ձեռքբերվող ապրանքի հատկանիշները, ինչպես նաև չեն ներառել գնման առարկայի ամբողջական նկարագրությունը:

Եթե համեմատելու լինենք «Պրեսեպտ»-ի 5,0 գ կշռով հաբերից ստացվող աշխատանքային լուծույթների կոնցենտրացիաների (ըստ ակտիվ քլորի տոկոսների)

աղյուսակի տվյալները ՀՀ ԱՆ հաստատված «Դիմաքս քլոր» ախտահանող նյութի 2,7 գ կշռով հաբերի մեթոդական հրահանգի տվյալների հետ, ապա ակնհայտ է դառնում, որ դրանք փաստացի հանընկնում են իրար հետ:

Պատվիրատուի բերված այն հաշվարկին, որ 10լ աշխատանքային լուծույթ ստանալիս՝ «Պրեսեպտ»-ից ծախսվում է 8 հաբ, իսկ «Դիմաքս քլոր»-ից՝ 14 հաբ, ապա պարզագույն թվաբանական հաշվարկը ցույց է տալիս, որ միևնույն 10 լ աշխատանքային լուծույթը ստանալու համար Պատվիրատուն «Պրեսեպտ»-ի 8 հաբի համար պետք է ծախսի 880 ՀՀ դրամ, իսկ «Դիմաքս քլոր»-ի 14 հաբի համար՝ ընդամենը 143 ՀՀ դրամ, ինչի արդյունքում տնտեսումը կլինի 6 և ավելի անգամ:

- 50-րդ չափաբաժին - համաձայն ՀՀ ԱՆ հաստատված «Սայդեքս ՕՊԱ» ախտահանիչ միջոցի մեթոդական հրահանգի՝ այդ միջոցը օժտված է հակամանրէային, հակավիրուսայի և հակասնկային ազդեցությամբ, միջոցի պիտանելիության ժամկետը փակ վիճակում 2 տարի է, բացելուց հետո՝ 75 օր, նախատեսված է բժշկական նշանակության տարբեր առարկաների ախտահանման և բարձր մակարդակի ախտահանման համար:

Համաձայն ՀՀ ԱՆ հաստատված «Ստերոքս» ախտահանիչ միջոցի մեթոդական հրահանգի՝ այդ միջոցը նույնպես օժտված է հակամանրէային, հակավիրուսայի և հակասնկային ազդեցությամբ, սակայն ի տարբերություն «Սայդեքս ՕՊԱ»-ի, «Ստերոքս»-ի պիտանելիության ժամկետը փակ վիճակում 3 տարի է, իսկ բացելուց հետո՝ 90 օր: «Ստերոքս»-ը նախատեսված է բժշկական նշանակության տարբեր առարկաների ինչպես ախտահանման և բարձր մակարդակի ախտահանման համար, այնպես էլ՝ մանէազերծման համար: Այսինքն՝ «Ստերոքս»-ը իր ախտահանիչ հատկությունների պահպանման ժամկետներով և ախտահանման մակարդակներով գերազանցում է «Սայդեքս ՕՊԱ»-ին:

Հերթական պարզագույն թվաբանական հաշվարկը ցույց է տալիս, որ Պատվիրատուն 189 000 ՀՀ դրամ գումար պետք է ծախսի 3,78 լիտր տարողությամբ 5 հատ «Սայդեքս ՕՊԱ» ձեռք բերելու համար (ընդհանուր ծավալը՝ 18,9 լ), որի 1 լիտրը կարժենա՝ 189 000 բաժանած 18,9 = 10 000 ՀՀ դրամ, այն դեպքում, երբ նրան գերազանցող հատկանիշներով «Ստերոքս»-ի 5 լիտր տարողությամբ 5 հատը (ընդհանուր ծավալը՝ 25,0 լ) ձեռք բերելու համար պետք կլիներ ընդամենը 44 500 դրամ և 1 լիտրի

համար կարժենար (44 500 բաժանած 25, 0 = 1780) ընդամենը 1780 ՀՀ դրամ, այսինքն՝ 5,6 անգամ ավելի էժան:

□ 51-րդ չափաբաժին - համաձայն ՀՀ ԱՆ հաստատված «Անիոզիմ ԴԴ 1» ախտահանիչ միջոցի մեթոդական հրահանգի միջոցի խտանյութի պիտանելիության ժամկետը 3 տարի է, աշխատանքային լուծույթինը՝ 3 օր, նախատեսված է միայն բժշկական նշանակության տարբեր առարկաների, ճկուն և կոշտ էնդոսկոպների և դրանց օժանդակ մասերի ախտահանման և նախամանրէազերծումային մշակման համար:

Համաձայն ՀՀ ԱՆ հաստատված «Մեգաբակ» ախտահանիչ միջոցի մեթոդական հրահանգի՝ այդ միջոցը նույնպես նախատեսված է միայն բժշկական նշանակության տարբեր առարկաների, ճկուն և կոշտ էնդոսկոպների և դրանց օժանդակ մասերի ախտահանման և նախամանրէազերծումային մշակման համար, սակայն ի տարբերություն «Անիոզիմ ԴԴ 1»-ի, «Մեգաբակ»-ի խտանյութի պիտանելիության ժամկետը 5 տարի է, աշխատանքային լուծույթինը՝ 41 օր: Բացի այդ «Մեգաբակ»-ը կիրառվում է նաև բազմաթիվ (թվով 35) նյութերի, մակերեսների, սարքավորումների, հագուստեղենի և այլնի ախտահանման, մաքրման, լվացման և դեզոդորացման համար, որոնց դեպքերում կիրառվում են տարբեր կոնցենտրացիաներով լուծույթներ, ինչն էլ հավանաբար շփոթության է մատնել Պատվիրատուին:

Երկու ախտահանիչ միջոցներից էլ հիմնականում կիրառվող աշխատանքային լուծույթների կոնցենտրացիան նույնն է՝ 0,5 տոկոս, նրանց ստացման և կիրառման աղյուսակները համընկնում են, միակ տարբերությունը այն է, որ «Անիոզիմ ԴԴ 1»-ի ախտահանման ժամանակը 15 րոպե է, իսկ «Մեգաբակ»-ինը՝ 30 րոպե:

Պատվիրատուն միևնույն ախտահանման մակարդակը ապահովելու նպատակով ընդհամենը 15 րոպե ավել սպասելու պարագայում կունենա՝ 910 000 ՀՀ դրամի տնտեսում:

□53-րդ չափաբաժին - ամբողջովին նույն իրավիճակն է, ինչ որ 51-րդ չափաբաժնով, միայն այն տարբերությամբ, որ այստեղ տնտեսումը կլիներ ավելի մեծ և կկազմեր 1 229 000 ՀՀ դրամ:

□52-րդ չափաբաժին - Պատվիրատուն «Խաչպար» ՍՊԸ-ին 52-րդ չափաբաժնով մերժելու որոշումը հիմնավորում է, իբրև Ընկերության առաջարկած նյութը ունի այլ ազդող նյութեր, ֆունգոստատիկ հատկություն ըստ բնութագրերի չունի, տարան դոզավորված չէ,

ինչը կարող է բերել չհիմնավորված գերածախսի և աշխատանքային անհարմարավետության:

2. «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

«Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ն 04.08.2016թ. թիվ 08-247 և 11.08.2016թ. թիվ 08-253 գրություններով հայտնել է հետևյալը.

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և, հրավերով սահմանված դեպքերում ու կարգով, գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 6-րդ մասի համաձայն գնահատման արդյունքում հայտը անբավարար գնահատվելու դեպքում հանձնաժողովը փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է առաջադրում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն տեղեկացրել է, որ վերընշված Օրենքի բոլոր դրույթները ներառված են ընթացակարգի հրավերում, որոնցով և առաջնորդվել է գնահատող հանձնաժողովը:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ տեղեկացրել է, որ «Խաչպար» ՍՊԸ-ն սահմանված կարգով ճանաչվել էր 1-ին տեղ զբաղեցնող մասնակից Ընթացակարգի թիվ 2-

րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ և 53-րդ չափաբաժիններով և սահմանված ժամկետում ներկայացրել էր որակավորումը հիմնավորող փաստաթղթերը, սակայն չէր ներկայացրել իր կողմից հաստատված, առաջարկված ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը: Այնուհետև մասնակիցը սահմանված մեկօրյա ժամկետում լրացրել է բացթողումը և ներկայացրել հաստատված տեխնիկական բնութագրերը: Գնահատող հանձնաժողովը մասնակցի ներկայացրած տեխնիկական առաջարկը գնահատել է՝ հիմք ընդունելով ներկայացրած բոլոր փաստաթղթերը և տեղեկությունները, այդ թվում ՀՀ ԱՆ մեթոդական հրահանգները և 27.07.2016թ. թիվ 11 արձանագրության 1-ին կետով «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը գնահատել է անբավարար՝ թիվ 2-րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ, և 53-րդ չափաբաժինների մասով՝ ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը հրավերով նախատեսվածին չհամապատասխանելու և ոչ համարժեք ապրանք առաջարկելու հիմնավորմամբ:

Պատվիրատուն գրությամբ հայտնել է, որ ինչ վերաբերվում է մասնակցի բողոքով ներկայացված 14 254 300 (տասնչորս միլիոն երկու հարյուր հիսունչորս հազար երեք հարյուր) ՀՀ դրամ գերածախսին, ապա դա այդպես չէ: Մասնակցի ներկայացրած գնային առաջարկերի և հաղթող ճանաչված մասնակիցների գնային առաջարկերի զուտ թվաբանական տարբերությունը 2-րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ, և 53-րդ չափաբաժիններով կազմում է 9 261 900 (ինը միլիոն երկու հարյուր վաթսունմեկ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ, սակայն ուսումնասիրելով տեխնիկական բնութագրերի տարբերությունները և մեթոդական հրահանգների ցուցումները (կիրառվող աշխատանքային լուծույթների %-ները), ակնհայտորեն պարզ է դառնում, որ ոչ մի գերածախսի մասին խոսք լինել չի կարող:

Ի պատասխան «Խաչպա» ՍՊԸ-ի կողմից 09.08.2016թ. ներկայացված ի լրումն ԳԲԽ-80/16 բողոքի՝ Պատվիրատուն ըստ ներկայացրած համապատասխան կետերի հայտնել է հետևյալը.

1. Գնահատող հանձնաժողովը մասնակցի հայտի թիվ 2-րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ, և 53-րդ չափաբաժիններով մերժման հիմքում դնելով տեխնիկական բնութագրերի անհամապատասխանությունները չի դիտարկել ապրանքի բրենդային անվանումները, այլ համեմատել է հրավերով նախատեսված և մասնակցի ներկայացրած տեխնիկական բնութագրերը, օգտվելով նաև տվյալ ապրանքների համար ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգներից:

2. Մասնակցի ներկայացրած իրավական ակտերը չեն կարող գերակա լինել «Գնումների մասին» ՀՀ օրենքից, ընդ որում չեն էլ հակասում Պատվիրատուի կազմած տեխնիկական բնութագրերին: Տարբեր ապրանքների նույն նպատակին ծառայելը, նույն խմբին պատկանելը, ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրված մեթոդական հրահանգի առկայությունը դեռ հիմք չէ դրանք իրար համարժեք ապրանքներ համարելու համար:

Գնահատող հանձնաժողովը նիստի արձանագրությամբ հիմնավորել է առաջարկված ապրանքը Պատվիրատուի կարիքին չհամապատասխանելու, հետևաբար նաև առաջարկված ապրանքը նախատեսված ապրանքին համարժեք չհանդիսանալու փաստերը:

3. Մասնակցի մեջբերումը Պատվիրատուի կողմից ապրանքների համարժեքությունը ընդունելու մասին միայն իր անհիմն մեկնաբանությունների արդյունք է և չի համապատասխանում իրականությանը: Բացի այդ, Պատվիրատուն բնութագրերում լուծույթի %-ներ, թվեր և չափիչ միջոցներ նշելով, ՀՀ ԱՆ մեթոդական հրահանգների առկայությանը, բրենդային անվանումներին Օրենքով սահմանված կարգով հղումներ կատարելով՝ հնարավոր մասնակիցներին փորձել է հնարավորինս ներկայացնել լուծույթի կիրառման օբյեկտները, նպատակը, քանակական անհրաժեշտ պահանջը և դրանով հիմնավորել իր կարիքը:

4. Թիվ 2 չափաբաժնի մասով գնահատող հանձնաժողովը իր թիվ 11 նիստի արձանագրության մեջ սխալ է նշել հրավերով նախատեսված նյութի օգտագործվող հաբերի քանակը, որտեղից և առաջացել է բողոքարկման նիստին հնչած 0.112 տոկոսի ենթադրությունը: Մեր 23.06.2016թ. թիվ 08-201 գրությամբ ներկայացված պատասխանում Պատվիրատուն հստակ նշել էր այն մասին, որ օգտագործվում է 0.2% աշխատանքային լուծույթ: Պարզապես գնահատող նահձհաժողովի նիստի արձանագրության մեջ 12 հաբի փոխարեն նշվել է 8 հաբ, դա հանդիսանում է տեխնիկական վրիպակ, ինչը սակայն չի փոխում հայտի մերժման բովանդակությունը:

Պատվիրատուի մոտ կիրառվող 12 հաբի դեպքում ներկայացված 0.2%-ը ավելի ճշգրիտ նշելով՝ կազմում է 0.168%, պարզապես 0.2-ը խոսակցականում օգտագործվող կլորացված տարբերակ է: Համաձայն Մասնակցի առաջարկած նյութի մեթոդական հրահանգի նույն նպատակին օգտագործվող լուծույթը 0.2%-անոց է, որի համար

օգտագործվում է 14 հատ 2.7 գրամանոց հաբ: Բացի շատ քանակի հաբերի ծախսից էական հանգամանք է հանդիսանում նաև հաբերից անջատվող ակտիվ քլորների տոկոսների տարբերությունները: Քանակների և տոկոսների համադրման արդյունքում համաձայն մեթոդական հրահանգների ակնհայտ է դառնում, որ մասնակցի առաջարկած ապրանքի կիրառման դեպքում աշխատանքային լուծույթում քլորի խտությունը ավելի բարձ կլինի և դա էլ իր հերթին առաջացնում է շնչառական օրգանների առավել գրգռում:

Մինչև ընթացակարգի հայտերի բացման նիստը «Խաչպար» ՍՊԸ-ի հարցադրումներում և ներկայացված բողոքներում ոչ մի կերպ չի բարձրացվել 51-րդ, 52-րդ և 53-րդ չափաբաժիններով նախատեսված տեխնիկական բնութագրերում ՀՀ ԱՆ գրանցման հավաստագրերի առկայության և 52-րդ չափաբաժնով նախատեսված օճառի համար ՀՀ ԱՆ մեթոդական հրահանգի առկայության պահանջները իրականության չհամապատասխանելու հարցը, ուստի գնահատող հանձնաժողովը հրավերում փոփոխություն կատարելու հնարավորության ժամանակահատվածում չի դիտարկել նման հարց: Նման հարց առաջացել է մասնակիցների հայտերը բացելուց հետո, բողոքների, նիստերի և մասնակցիների կողմից ներկայացրած հիմնավորումների արդյունքում:

Հետևաբար գնահատող հանձնաժողովը այդ անհամապատասխանությունը հրավերում վերացնելու հնարավորություն չի ունեցել: Այնուամենայնիվ, Մասնակիցների կողմից նշված փաստաթղթերի ներկայացման պահանջ Մասնակցի ընտրության փուլում հրավերով նախատեսված չէ, գնահատող հանձնաժողովը նման պահանջ որևէ մասնակցի չի առաջադրել, և նման փաստաթղթի բացակայության հիմքով որևէ մասնակցի հայտ չի մերժել: ՀՀ կառավարության 10 փետրվարի 2011թ N168-Ն որոշմաբ հաստատված գնումների կազմակերպման կարգի (այսուհետև կարգ) 54-րդ կետի համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը պայմանագրում ներառելով կվերացվի ներկայացված բացթողումը, որը փաստացի որևէ մասնակցի շահ չի ոտնահարել:

5. Չենք կարող ասել թէ ինչ է նկատի ունեցել Մասնակիցը իր տարբեր գրություններում «Մասնակիցներ» բառը օգտագործելով, սակայն այդ բառի հասկացությունը հստակ սահմանված է Օրենքի 2-րդ հոդվածով: Ինչ վերաբերվում է ըստ Մասնակցի պատվիրատուի կողմից գնման առարկայի տեխնիկական բնութագրերի օրինախախտ կերպով կազմմանը և հետագայում հայտերը մերժելու համար հիմքեր

ստեղծելուն, ապա մասնակիցը միայն ճիշտ է նշել «ենթադրություններ» բառը, քանի որ դա միայն իր ենթադրությունների արդյունք է: Բողոքարկման ընթացքում նման խախտումներ հիմնավորող ապացույցներ մասնակցի կողմից չեն ներկայացվել: Պատվիրատուն Մասնակցի հայտը մերժելու հիմքում որևէ բրենդային անվանման հղում չի օգտագործել, այլ առաջնորդվել է ապրանքի տեխնիկական հատկանիշների անընդունելի տարբերություններով, իսկ ընտրված մասնակցին որոշելիս՝ տեխնիկական հատկանիշների համապատասխանություններով:

Գնահատող նահձնաժողովի 27.07.2016թ. կայացած նիստի թիվ 1 որոշմամբ ներկայացված անհամապատասխանությունները հիմնավորելու նպատակով կից ներկայացնում ենք Մասնակցի կողմից հաստատված և Պատվիրատուին ներկայացված տեխնիկական բնութագրերը, Մասնակցի կողմից հայտով ներկայացված գովազդային բրոշյուրի 52-րդ չափաբաժնին վերաբերվող «Դիասոֆտ բիո» անվանումով ապրանքի մասին էջի պատճենը և մասնակցի ներկայացրած մեթոդական հրահանգը, որտեղից հստակ երևում է դոզավորող պոմպի բացակայությունը և յուրաքանչյուր լվացման դեպքում 6մլ ծախսը և կիրառման անհարմարավետությունը, թիվ 2-րդ, 51-րդ և 53-րդ չափաբաժիններով նախատեսված և առաջարկված ապրանքների վերաբերյալ ՀՀ առողջապահության նախարարության հաստատած մեթոդական հրահանգների պատճենները:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն նշել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է օրինաչափ և «Խաչպար» ՍՊԸ-ի բողոքը անհիմն է:

3. <u>ԳԲԽ-80/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 15.08.2016թ. եզրակացությունը և առաջարկել է «Խաչպար» ՍՊԸ-ի 29.07.2016թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի՝

1.դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.07.2016թ. թիվ 11 արձանագրության 1-ին կետով՝ թիվ 2-րդ, 50-րդ, 51-րդ և 53-րդ չափաբաժինների մասով «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը,

1. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.07.2016թ. թիվ 11 արձանագրության 1-ին կետով՝ թիվ 52-րդ չափաբաժնի մասով «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ պահանջը մերժել:

4. ԳԲԽ-80/16 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-80/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.«Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների և նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ ընկերությունների, Ընթացակարգի 2-րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ, և 53-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Խաչպար» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի համաձայն՝ 2-րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ, և 53-րդ չափաբաժիններով համապատասխանաբար պահանջվել է՝ «Պրեսպտ» կամ համարժեք, «Սայդեքս Օպա» կամ համարժեք, «Անիոզիմ ԴԴ1» կամ համարժեք, «Անիոսեյֆ Սավո-Դու ՀՖ» կամ համարժեք և «Հեքսանիոս ԳՌ» կամ համարժեք:

3. «Խաչպար» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով 2-րդ չափաբաժնի համար առաջարկել է՝ «Պրեսպտ» - համարժեք՝ «Դիմաքս քլոր», 50-րդ չափաբաժնի համար՝ «Սայդեքս Օպա» - համարժեք՝ «Ստերոքս», 51-րդ չափաբաժնի համար՝ «Անիոզիմ ԴԴ1» - համարժեք՝ «Մեգաբակ», 52-րդ չափաբաժնի համար՝ «Անիոսեյֆ Սավո-Դու ՀՖ»- համարժեք՝ «Դիասոֆտ բիո», 53-րդ չափաբաժնի համար՝ «Հեքսանիոս ԳՌ»- համարժեք՝ «Մեգաբակ»:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 27.07.2016թ. թիվ 11 արձանագրության 1-ին կետով մերժել է «Խաչպար» ՍՊԸ-ի հայտով ներկայացված թիվ 2-րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ, և 53-րդ չափաբաժինները՝ ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը հրավերով նախատեսվածին չհամապատասխանելու և ոչ համարժեք ապրանք առաջարկելու հիմնավորմամբ:

5. Բողոքում նշված ախտահանիչ միջոցների համարժեքության վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով Կենտրոնը 03.08.2016թ. գրությամբ դիմել է ՀՀ առողջապահության նախարարություն, կից ներկայացնելով՝ «Պրեսեպտ», «Սայդեքս Օպա», «Անիոզիմ ԴԴ1», «Հեքսանիոս ԳՌ» ախտահանիչ միջոցների ՀՀ առողջապահության նախարարի հրամաններով հաստատված մեթոդական հրահանգները՝ խնդրելով տալ համապատասխան եզրակացություն վերոհիշյալ ախտահանիչ միջոցների կիրառման ոլորտների ու նպատակների, ախտահանման սպեկտրների՝ մանրէասպան, վիրուսասպան և սնկասպան հատկությունների համարժեքության վերաբերյալ, ինչպես նաև ախտահանիչ միջոցների տեխնիկական բնութագրերով, տվյալ ախտահանման միջոցից ստացվող՝ միևնույն նպատակներով օգտագործվող աշխատանքային լուծույթի խտությունը, որպես ելակետային չափանիշ ընդունելու հարցը, ինչը կնպաստի գնումների գործընթացի ավելի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացմանը:

6.Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 03.08.2016թ. գրությանն ի պատասխան՝ 15.08.2016թ. ԱԿ 9003-16 գրությամբ ՀՀ առողջապահության նախարարությունը հայտնել է հետևյալը.

□սանիտարահամաճարակային հսկողության ենթակա ապրանքները, ունենալով մանրէասպան, սնկասպան, վիրուսասպան հատկություն, պարունակում են որոշակի ազդող նյութեր, կոնկրետ չափաբաժիններով և եթե դրանք նույնն են, ապա այդ ախտահանիչ միջոցները համարժեք են, այսինքն՝ փոխադարձ փոխարինելի,

□ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի թիվ 2, 50, 51 և 53-րդ չափաբաժիններով սահմանված՝ «Պրեսեպտ», «Սայդեքս Օպա», «Անիոզիմ ԴԴ1», «Հեքսանիոս ԳՌ» ախտահանիչ միջոցները՝ ըստ կիրառման ոլորտների և նպատակների, համարժեք են «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից թիվ 2, 50, 51 և 53-րդ չափաբաժիններով ներկայացված «Դիմաքս քլոր», «Ստերոքս», «Մեգաբակ» ախտահանիչ միջոցներին:

□Ինչ վերաբերվում է Ընթացակարգի 52-րդ չափաբաժնով սահմանված՝ «Անիոսեյֆ Սավո-Դու ՀՖ» ախտահանիչ միջոցին, ապա ՀՀ առողջապահության նախարարի հրամաններով հաստատված մեթոդական հրահանգը չլինելու հետևանքով եզրակացությունը տվյալ ախտահանիչ միջոցի վերաբերյալ բացակայում է:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդը, ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի 29.07.2016թ. ներկայացրած բողոքը և ի լրումն բողոքի ներկայացված գրությունները, «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի 04.08.2016թ. թիվ 08-247 և 11.08.2016թ. թիվ 08-253 գրությունները, Ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, Ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), և հիմք ընդունելով՝ ՀՀ առողջապահության նախարարության 15.08.2016թ. ԱԿ 9003-16 գրությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետ նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետնաև՝ Կարգ), հայտնում է հետևյալը.

Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում եմ հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.07.2016թ. թիվ 11 արձանագրության 1-ին կետով մերժել է «Խաչպար» ՍՊԸ-ի հայտով ներկայացված թիվ 2, 50, 51, 52, և 53-րդ չափաբաժինները՝ ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը հրավերով նախատեսվածին չհամապատասխանելու և ոչ համարժեք ապրանք առաջարկելու հիմնավորմամբ:

Բողոքում նշված ախտահանիչ միջոցների համարժեքության վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով Կենտրոնը 03.08.2016թ. գրությամբ դիմել է ՀՀ

առողջապահության նախարարություն, կից ներկայացնելով՝ «Պրեսեպտ», «Սայդեքս Օպա», «Անիոզիմ ԴԴ1», «Հեքսանիոս ԳՌ» ախտահանիչ միջոցների ՀՀ առողջապահության նախարարի հրամաններով հաստատված մեթոդական հրահանգները՝ խնդրելով տալ համապատասխան եզրակացություն վերոհիշյալ ախտահանիչ միջոցների կիրառման ոլորտների ու նպատակների, ախտահանման սպեկտրների՝ մանրէասպան, վիրուսասպան և սնկասպան հատկությունների համարժեքության վերաբերյալ, ինչպես նաև ախտահանիչ միջոցների տեխնիկական բնութագրերով, տվյալ ախտահանման միջոցից ստացվող՝ միևնույն նպատակներով օգտագործվող աշխատանքային լուծույթի խտությունը, որպես ելակետային չափանիշ ընդունելու հարցը, ինչը կնպաստի գնումների գործընթացի ավելի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացմանը:

Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 03.08.2016թ. գրությանն ի պատասխան՝ 15.08.2016թ. ԱԿ 9003-16 գրությամբ ՀՀ առողջապահության նախարարությունը հայտնել է հետևյալը.

□սանիտարահամաճարակային հսկողության ենթակա ապրանքները, ունենալով մանրէասպան, սնկասպան, վիրուսասպան հատկություն, պարունակում են որոշակի ազդող նյութեր, կոնկրետ չափաբաժիններով և եթե դրանք նույնն են, ապա այդ ախտահանիչ միջոցները համարժեք են, այսինքն՝ փոխադարձ փոխարինելի,

□Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի թիվ 2-րդ, 50-րդ, 51-րդ և 53-րդ չափաբաժիններով սահմանված՝ «Պրեսեպտ», «Սայդեքս Օպա», «Անիոզիմ ԴԴ1», «Հեքսանիոս ԳՌ» ախտահանիչ միջոցները՝ ըստ կիրառման ոլորտների և նպատակների, համարժեք են «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից թիվ 2-րդ, 50-րդ, 51-րդ և 53-րդ չափաբաժիններով ներկայացված «Դիմաքս քլոր», «Ստերոքս», «Մեգաբակ» ախտահանիչ միջոցներին:

□Ինչ վերաբերվում է Ընթացակարգի 52-րդ չափաբաժնով սահմանված՝ «Անիոսեյֆ Սավո-Դու ՀՖ» ախտահանիչ միջոցին, ապա ՀՀ առողջապահության նախարարի հրամաններով հաստատված մեթոդական հրահանգը չլինելու հետևանքով եզրակացությունը տվյալ ախտահանիչ միջոցի վերաբերյալ բացակայում է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Խաչպար» ՍՊԸ-ի՝ 29.07.2016թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի՝

1. դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.07.2016թ. թիվ 11 արձանագրության 1-ին կետով՝ թիվ 2-րդ, 50-րդ, 51-րդ և 53-րդ չափաբաժինների մասով «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը,

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.07.2016թ. թիվ 11 արձանագրության 1-ին կետով՝ թիվ 52-րդ չափաբաժնի մասով «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ պահանջը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Անդամներ՝ **Կարապետ Խարբերդյան**

Լիդիա Պողոսյան